ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 13րդ շրջանի (97օգոստ.—98յունիս) բաժնորդագրին է 20 Ֆր. կանխիկ։ Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Ֆր. հաշուելով և 1898յունիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է ղրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France).

ԺԴ ՏԱՐԻ ԹԻՒ 22

1897 ՆՈՅԵՄԲԵՐ 17

1897 ՆՈՅԵՄԲԵՐ 5 (Հ. Տ.)

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

Կը հրատարակուի Դշ. և Երբ. օրեր

ՏԱՏՄԱՆԵՆԻՔ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ բաւական միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Զարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները։

Մանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Մանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ.

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ„Ի ԺԴ ՇՐՋԱՆԻՆ

(1897 *ՕԳՈՍՏՈՍ* —98 *ՅՈՒՆԻՍ*)

13րդ շրջանն սկսած է 1897 օգոստոս ամսի մէկէն և կը տևէ մինչև 1898 յունիս ամսի 30ը (Ն. Տ.)։

Ամեն տեղի համար ուր այս լրագրի ազատօրէն մտնելն արգիլուած չէ, ամբողջ շրջանի բաժնորդագրին է 20 ֆրանգ որ բաժնորդները կրնան իրենց դիւրութեան համեմատ մաս առ մաս ալ կանխիկ վճարել 5 կամ 10 ֆրանգով, ամիսը 2½ ֆրանգ հաշուելով, և երբ այս 13րդ շրջանի համար իրենց մաս առ մաս վճարածի ամբողջ գումարը հասնի 20 ֆրանգի, այդ ժամանակ ամբողջ 13րդ շրջանի (1897 օգոստոս—98 յունիս) բաժնորդագիրը վճարած կը համարուին։

Իսկ անոնք որ բաժնորդ չենգրուիր ամբողջ 13րդ շրջանին համար, ամսական 2½ ֆրանգ հաշուելով կրնան բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզեն, 1898 յունիս ամսէն անդին չանցնելու պայմանով, որովհեան մէկ շրջանի բաժնորդագրի հաշիւը՝ յաջորդող միւս շրջանի բաժնորդագրի հաշուին հետ չկապուիր. ամեն մէկ շրջանի հաշիւը զատ զատ կը բռնուի։

Թէ օգոստոս ամսէն, թէ սեպտեմբերէն, թէ հոկտեմբերէն և թէ նոյեմբերէն սկսելով 13րդ շրջանին բաժնորդ եղողները հաւասարապէս կը պարտաւորին 20 ֆրանգ վճարել մինչև 1898 յունիսի վերջը բաժնորդագրուելու համար։

Օգոստոսի և սեպտեմբերի թիւերն սպառած են արդէն։ Այսուհետև կընանք ղրկել միայն հոկտեմբերէն ըսկսած թիւերը։

«ԱՐՄԷՆԻԱԻ ՕԺԱՆԴԱԿՆԵՐ»ին, իրենց ստացած թերթէ զատ՝ որի բաժնորդագինը 20 ֆրանգ է, ուրիշների համար քանի թերթ որ ուզեն, իրենց լրագրի ծրարին մէջ դնելով և առանց ուրիշ հասցէ մը վրան գրուելու կը ղրկուի, ամսական մէկ ֆրանգ բաժնորդագին հաշուելով։

«Արմէնիաի Օժանդակ»ութեան կանոնագիրը կը ղրկուի ցանկացողներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ոյժերի ցրուումը.— Թիւրքեւհայկական համաձայնութիւն. — Խրիմի պատերազմը եւ Ֆրանսայի արտաքին քաղաքականութիւնը. — Մեծ պետութիւնները, Թիւրքիա եւ Յունաստան. — Նամակ Սմիրնայի Միացեալ Նահանգներէն (Ռուսքը).—Թիւրքիահն լուրեր.— Արտասահմանի լուրեր. — Մանուցումներ.

ՈՅԺԵՐԻ ՑՐՈՒՈՒՄԸ

Դեռ հայ հայրենասէրներուն խիստ մեծագոյն մասին մէջ կը տիրէ այն համոզումը թէ ամեն անհատ կրնայ և պարտաւոր է հայրենիքի ազատութեան համար ինք ՈՒՂՂԱԿԻ աշխատիլ։ Այսպէս մէկը կը կարծէ թէ մի օգտակար գործ արեց ինքնագլուխ նպաստելով մի կամաւորի կամ հայրենասէր գործիչի, մի ուրիշ խմբակ ինքնին զէնք գնելու և երկիրը ղրկելու վրայ կը մտածէ, երրորդ մը կելնէ իր անձնական ոյժերով և համոզմամբ օտար մը թերթի մէջ մի քանի սիւն կը գրաւէ ի նպաստ հայ դատին և կը մտածէ որ մի պարտք կատարեց։

Սակայն այդ անհատներուն և խմբակներուն կողմէ եղած ուղղակի օգնութիւններն ոչ թէ միայն շատ օգուտ չեն տար հայրենիքին, այլ մինչև իսկ կրնան ջնջակար դառնալ, ոյժերի անօգուտ սպառման պատճառով։

Զոհելու և օգնելու ԱՆՈՒՂՂԱԿԻ ձևը թէև ամենէն իրական օգուտ կուտայ, բայց դեռ պարտաւորուիր է վերանդադար և այլ և այլ ձևերով կերկնուած այն միտք թէ «անհատական ճիգերը ոչինչ կրնան ընել, պէտք է որ անհատներ իրենց ոյժեր ընդհանուրի մէջ խառնեն» արմատ չէ բռնած հայ ժողովրդին մէջ։

Այդ խնդրին ներկայիս մէջ ալ կենսական և ժամանակակից լինելուն համար, մենք այդ կէտի վրայ դարձեալ կը հրաւիրենք հայ հայրենասէրներուն ուշադրութիւնը, և ինչքան ալ անախորժ երևի սկզբէն, մեր այս բանաձև կը դնենք թէ անհատներ և խմբակներ պարտաւոր են միայն կոչակցութեան համար աշխատելու. իսկ կոչակցութեան պարտաւորութիւնն և իրաւունքն է հայրենիքին համար աշխատել։

Թողունք այն կրկնուած և ճշմարիտ տեսութեան մասին խօսիլ թէ անհատ ջանքերը անապատի մէջ ցամքող աղբերակներ են և թէ անոնք մի լճի մէջ հաւաքուելով կրնան մի տեղ ոռոգիլ, հետևեալ պարագայն միայն նկատի առնենք թէ հայրենիքի ազատութեան համար գործելը այնքան ծանր և բազմակնճիռ մի խնդիր է որ ամեն մի անհատ չկրնար ո՛չ ժամանակ և ո՛չ խելք ունենալ՝ օգնելու և գործելու կերպը ինքնին որոշելու համար։ Յեղափոխական գործը կառավարելն աւելի դժուար է քան կազմակերպուած մի պետութիւն կառավարելը. յեղափոխական գործը աւելի փորձառու և կամքի տէր անձեր կը պահանջէ։

Մեր մէջ կազմուած հայրենասիրական մեծ խմբերի կուսակցութիւնների կեդրոններ, որոնց մէջ գտնուող արդիկ իրենց բան գործ միայն յեղափոխութեան համար աշխատելն արած են և ամեն կողմ գտնուող Հայերի հետ յարաբերութեան և լուրերի կեդրոնը կը գտնուին, ատոնք ալ հազիւ թէ կարող են խարխափելով, փորձեր անելով՝ գործելու մի յարմար ճամբայ գտնել և դեռ ատոնց տարբեր ծրագիրներին մէջ մին ուղիղ և միւսները սխալ պիտի լինին. ո՞ւր մնաց որ հայ վաճառականը, արհեստաւորը, ուսուցիչը որոնք շաբաթը մէկ անգամ ապիր կը կարդան կամ չեն կարդար, իրենց շրջանակէն դուրս ուրիշ տեղերի գործերը չգիտեն, ատոնք ելնեն այս կամ այն հայրենասիրական օգտակար գործ անելու յաւակնութիւն ունենան. չէ՞ որ իրենց անգիտութեան պատճառով իրենց զոհողութիւն անօգուտ կը լինի։

Յեղափոխական ձեռնարկներն ամեն տեղ և ամեն ժամանակ միօրինակ օգտակար չեն։ Այս ինչ տեղ օգտակար է կամաւոր ղրկել, այն ինչ տեղ ջնջակար. մէկ օր ստիպողական է զէնքի դրամ տալը, միւս օր կրնայ դեռ անօգուտ և յետաձգելի նկատուիլ. մէկ տեղ շարժում պէտք է անել, մի ուրիշ տեղ լուռ մնալ. ասպատակային խումբեր կրնան մի ժամանակ օգտակար լինել, իսկ ուրիշ ժամանակ անպայման ջնջակար. մէկ խօսքով, պարագայներուն հաղարումէկ փոփոխութիւններ կան։ Ուրեմն այդքան փոփոխութիւնների մէջէն գործին օգտակար մի ճամբայ գծելու համար անհրաժեշտ է որ մի մարդ թէ՛ յեղափոխական-մասնագէտ լինի և թէ՛ միշտ այդ գործին մէջ գտնուի։ Ամեն անհատ այդ մասնագիտութիւն չկրնար ձեռք բերել. հազիւ թէ կուսակցութիւնների կեդրոնին մէջ պէտք եղած միջոցներ կը գտնուին որոնք գործը ամեն կողմէ և օրն օրին ուսումնասիրելու դիւրութիւն տան. ուրեմն ի՞նչքան անհաշիւ գործ կը լինի որ ամեն անհատ ելնէ ինքն իր խելքով, ուղղակի զէնքի դրամ տայ, կամաւորի, գործիչի նպաստէ, խումբ կազմէ ևն., լոկ լսելով որ այդ տեսակ բաներ պէտք կը լինին յեղափոխութեան։

Հայ հայրենասէրները, կը կարկնենք, անօգուտ մի բան արած կը լինին եթէ շարունակեն իրենց զոհողութիւններ ՈՒՂՂԱԿԻ կերպով անել։ Եթէ կուզեն օգտակար զոհողութիւններ անել, պէտք է որ իրենք լոկ օգնեն իրենց ընտրած ոևէ կուսակցութեան զօրանալուն. կուսակցութեան մը օգնելն ո՛չ մեծ խելք և ո՛չ մեծ հմտութիւն կուզէ, ամեն մարդ կրնայ իր հաւնած կուսակցութեան՝ գրչով, դրամով պարբերական մի օգնութիւն անել, նկատի ունենալով ամենէն առաջ կուսակցութիւնը զօրացնել. սա ուժոգնալով կրնայ ուղղակի մի ծառայութիւն մատուցանել երկրին, իր ձեռք առնուած ոյժեր ունենալով և ժամանակն ու հանգամանքները լաւ կշռելու դիւրութիւնն ունենալով։

Մեր հայրենասէր անհատներուն նիւթական փոքր կարողութիւնով շատ չնչին մի քանակ զէնք ձեռք կրնայ բերուիլ. իսկ այդ նիւթական փոքր ոյժերով զօրացած և ժողովրդականացած կուսակցութիւնը ի հարկին 100,000ներ կրնայ հաւաքել ժողովրդէն և դայն իր ուզած կողմն առաջնորդել։

Իսկ եթէ մենք հեռանանք, խրբտչինք կուսակցութիւնը զօրացնելու միտքէն, արհամարհենք արդէն եղածներուն ամենքն ալ, ուրիշ բան արած չենք լինիր, եթէ ոչ անթիւ անճատ — կուսակցութիւնների ծնունդ տալ որոնք պիտի սպառեն չորցուն ազգին մէջ եղած ոյժերը և Հային իրբ ազգութեան մահուան վճիռը պիտի փութացունեն։

Մ. Ա.

ԹԻՒՐՔԻՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Աթէնքի Ակրոպոլիս լրագրի Կ. պոլսի թղթակիցը հաղորդած է հետեւեալ տեղեկութիւնները, որոնք թէև ստուգութեան կը կարօտին, եւրոպական լրագիրներն ալ վերապահութեամբ արտատպած լինելով, իբրև հետաքրքրաշարժ տեղեկութիւն մը կը հաղորդենք մեր ընթերցողների։ Թէև «Ակրոպոլիս»ի թղթակցին պէս չենք կարող երաշխաւորել այդ զբրուած մանրամասնութիւնների ճշդութեան, բայց կերևի թէ մի բան եղած կայ։ Ահաւասիկ այդ թղթակցութեան ամփոփումը։

Մի քանի շաբաթ առաջ Լոնտոնի «Սթանտարտ» լրագրին մէջ մի կարճ տեղեկութիւն հրատարակուած էր թէ մի Անգլիացի, Մ..., Կ. պոլիս գնացած է «Հայկական մասնաժողովի կողմէն իբրև պատուիրակ՝ Կեսարիայի մէջ մի հիւանդանոց հիմնելու թոյլտուութիւն խնդրելու համար։»

Այդ հրատարակութիւն գրաւեց «Ակրոպոլիս»ի թղթակցի ուշադրութիւնը որ մտածեց թէ այդ ճանրորդութեան մէջ մի գաղտնի բան լինելու է որ մի հիւանդանոցի հիմնարկութենէն աւելի կարեւոր է որովհետև հիւանդանոցի մը հիմնարկութիւնը Հայերի պատրիարքարանն ալ կրնայ խնդրել ինչպէս օրէնք է այդ թիւրքիայի մէջ։ Ուստի թղթակիցը հետաքրքրուեցաւ այդ մասին տեղեկութիւններ ստանալու և ահա ինչ որ իմացեր է եղեր։

Այդ խորհրդաւոր Անգլիացին մի քաղաքական պատուիրակ էր և ոչ ուրիշ բան, և իրեն պաշտօն յանձնուած էր թիւրքահայկական համաձայնութիւն մը գոյացունել։ Կ. պոլիս հասածին պէս ուղղակի գնաց անգլիական դեսպանատունը ուր լաւ յանձնարարական թուղթեր տուին իրեն, օսմանեան մի քանի նախարարների և պալատական բարձրաստիճան անձերի ուղղուած։ Ուրբաթ օր ներկայ դըտնուեցաւ սէլամլըքի արարողութեան իբրև նշանաւոր մի անձնաւորութիւն, իրեն հետ ունենալով դեսպանատան գաւազը, և պալատական ամենէն ազդեցիկ անձերէ մէկին հետ տեսակցիլ ուզեց։ Տեսակցութիւնը տեղի ունեցաւ այդ պաշտօնեայի Նիշան Թաշիի ապարանքին մէջ։ Անգլիացիին առաջարկութիւնները անընդունելի երևցան։ Փոքր Ասիի հայաբնակ նահանգներին համար աշխարհագրական մի նոր բաժանման ծրագիր ներկայացուցած էր։ Այդ ծրագրի համեմատ այնպիսի նահանգներ կը կազմուէին որոնց բնակիչների մեծամասնութիւնը Հայ կը լինէր և այդ կերպով մի իրական Հայաստան կը կազմուէր, այսինքն Թիւրքիայի մէկ մասին մէջ Հայ ժողովուրդը խիտ բնակած կը լինէր։ Թիւրքերն ո՛չ մէկ կերպով չէին կրնար ընդունիլ այդ։

Ատկէ զատ՝ Անգլիացին կուզէր որ նահանգային նոր սահմանագծութիւնը եղածին պէս, այն նահանգների մէջ ուր Հայեր մեծամասնութիւն պիտի կազմեն, հանրային բարձր և ստորին պաշտօնեայները քրիստոնեայներ լինին։ Մէկ խօսքով՝ իր պահանջները աւելի ընդարձակ էին քան թէ վեց մեծ պետութիւնների խմբագրած բարենորոգումների ծրագիրը որը ընդունելու Բ. Դուռը պարտաւորցունել փորձեցին 2 տարի առաջ։

Այդ տեսակցութենէ յետոյ, Անգլիացին խնդրեց որ սուլթանը մի ունկնդրութիւն շնորհէ իրեն։ Ապտիւլ Համիտի խորհրդականները երկարօրէն խորհրդակցելով այդ ունկնդրութիւն շնորհելու մասին, երկու կողմի բաժնուեցան. ոմանք ունկնդրութիւնը շնորհելու կողմն էին. ոմանք ալ սաստիկ կը հակառակէին, ըսելով թէ այդ Անգլիացիի արած առաջարկները նկատողութեան առնուելու անգամ արժանի չեն և հետևապէս ատոր համար կայսերական ունկնդրութիւն չը. նորհուելու պէտք չեն տեսներ։ Այս վերջինների կարծիքը յաղթանակեց և Անգլիացին առանց սուլթանին ներկայանալու Լոնտոն վերադարձաւ, Թիւրքահայկական համաձայնութիւն մը գոյացունելու իր պաշտօնի մէջ բոլորովին անյաջող ղ եղնելով։

Ակրոպոլիսի թղթակիցը կըսէ թէ Անգլիացիին այդպէս անյաջող կերպով Լոնտոն վերադառնալուն վրայ էր որ թիւրք կառավարութիւնը կասկածեցաւ թէ Հայեր նորէն կը սկսին ոճրագործութիւններ անել և հետամուտ եղաւ ոստիկանական խիստ հսկողութիւններ գործադրելով զգուշական միջոցներ ձեռք առնելու։

ԽՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՓԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շար. 21րդ թուին եւ վերջ)

Ահաւասիկ ո՞ւր հասած էր գործը, Ֆըրանսային Թիւրքիան փրկելէն հապա՛ մէկ տարի յետոյ. ահաւասիկ ինչ որ արդիւնաւորած էին Սեբաստոպոլի պարիսպներին տակ մեր զօրքերի ցոյց տուած քաջութեան և չարքաշութեան հրաշալիքները։ 1857 օգոստ. 6ին Տ. Թուվնէլ կը գրէր մեզ. «Թոյլտուութիւն կը խնդրեմ կայսրէն իրեն ցաւս յայտնելու որը զգացի իր դրօշակ վար առնելով մեր հակառակորդների ապերախտութեան և հաւատարմութեան առջև, երկու քայլ անդին այն գերեզմանատունէ ուր կը հանգչին մեր 30,000 զօրքեր։» Ռուսիան ալ փոխարէն գոհունակութիւն կը զգար որ Թիւրքիայի հետ իր դիւանագիտական յարաբերութիւններ կը խզէր միևնոյն օր, ինչպէս մենք։ Այդ կերպով նամեզ ցոյց կուտար թէ որչա՛փ սխալած էինք մեր հակառակորդներ ինչպէս և մեր դաշնակիցներ ընտրելուն մէջ։

Որպէսզի Թիւրքիա զինքն և Անգլիա դադրի մեզ դէմ անոր գաղտնի աջակցելէ, հարկ եղաւ որ Նափոլէոն Գ. կայսրը և Անգլիայի թագուհին մի տեսակցութիւն ունենան։ Խրիմի պատերազմի միջոցին Անգլիացիներին մեր մատուցած ծառայութիւնների յիշատակը դեռ այնչափ թարմ էր որ չէին կրնար հաշուի չառնելզայն թագուհիին հետ եղած խորհրդակցութիւններին մէջ։ Լորտ Սթրաթֆորտ ինքն իսկ հրաւիրուեցաւ գոհացում տալու Ֆրանսական կառավարութեան և Մոլտաւայի ընտրութիւնների ոչնչացման հրաման հանել տալու սուլթանին։ Ինչպէս որ կը վախցէր կայսրը, նոր ընտրութիւնները՝ որոնք գրեթէ օրինաւորապէս եղան այս անգամ, կատարուեցան նոյն իսկ սկզբունքին վրայ, երկու իշխանութիւններին իրար հետ միանալուն վրայ, որ Վալաքիայի դիւանէն միաձայնութեամբ ընդունուեցաւ և Մոլտաւայի դիւանէն ալ ձայների մեծամասնութեամբ։

Բայց կայսրը որ արդէն ձեռք ձգած էր իր կեանքի համարած բանը, այսինքն ժողովուրդների ընտրողական իրաւունքը, ա՛լ կը պաղէր միութեան գործէն որը առաջ տանիլ պատուիրած էր նախ իր դեսպանի, խնդրին լաւագոյն լուծումը համարելով զայն։ Վեհապետին իտալական դաստիարակութիւնը յայտնի կերևէր նոյն իսկ այն բառի մէջ որը կը գործածէր այդ գիրքի փոփոխումը նշանակելու համար։ Ա՛լ վերջնական կարգադրութեան վրայ չէր խօսեր. գործերին երկարաձգուելէն տաղտկացած, գոհ կը լինէր յարմարող կարգադրութենէ մը (una combinazione) որ ամենքն ալ համաձայնեցունէր։

Խրիմի պատերազմի այս խզճալի արդիւնքը կարդարացունէ դէպքերի ընթացքին վրայ Ֆ. Թուվնէլի արած խիստ դատաստանը։ Թէև բոլորովին անձնուէր էր կայսրին, բայց չէր ծածկեր թէ ինչ վտանգների կենթարկէր ինքզինքը այդպիսի ցնորքներով սնած միտք մը որ Ֆրանսական դիւանագիտութեան դարաւոր աւանդութիւններին օտար էր բոլորովին։ «Երկու տարիէ ի վեր մեր արտաքին քաղաքականութեան արուած ուղղութիւնը, կը գրէր, — եթէ կարելի է ուղղութիւն անուանել ոևէ հասունցած գաղափարի, ոևէ յարատևութեան ոգիի, յարմար ժամանակին մէջ անողոքութեան բացակայութիւնը — կը սպառնայ տէրութեան համար աղէտ մը դառնալ։» Երկրորդ կայսրութեան արտաքին քաղաքականութեան վրայ մի բարեկամի արած այդ դատողութիւնը՝ մինչև հիմա եղած դատողութիւնների ամենէն ճշմարիտը կը համարիմ ես։ Այո՛, ինչպէս Տ. Թուվնէլ 1857էն ի վեր կը նախատեսէր, այդ արտաքին քաղաքականութիւն մի հանրային ապէտ եղաւ։ Այդ քաղաքականութիւնը էր որ մեզ Մեքսիքա առաջնորդելով թողուց որ Ծատովան լինի. մեզ Սէտան առաջնորդելով, Մէյսը կորսնցունել տուաւ և այդպէս մեր պատմութեան մէջ 300 տարի յետ դարձուց մեզ, Քաթոֆամպրէսիի դաշնադրէն և Հանրի Բ.ի ձեռք բերածներէն անդին։

Երբ երկրորդ կայսրութեան և երկրորդ կայսրին վրայ համակրութեան կեղծով մը կը խօսին մեզ, ինչպէս այդ կանեն մի քանի նշանաւոր գրագէտներ, մեզ ալ կը պարտաւորցունեն կրկնելու ինչ որ կը մտածենք ատոնց մասին։ Ցաւարակամ կը համաձայնինք թէ Նափոլէոն Գ. անձնականապէս հրապուրիչ ազդեցութիւն մը ունէր, թէ Հորթենսիա թագուհիին և Ժոզէֆին կայսրուհիին վաստակած էր բարեշնորհութիւնն ու հմայքը, թէ իրեն շուրջը գտնուողներին համար բարեացակամ էր, թէ առատաձեռն էր մինչև շռայլութեան աստիճան, իր բարեկամներուն շատ յարած էր և հաւատարիմ։ Իրբև անհատ մարդ մը նկատելով զինք, ինչ լաւութիւն որ ուզեն, կրնանք ըսել իրեն վրայ։ Բայց իրբև վեհապետ մը դատելով, չենք կարող մոռնալ թէ 1848 դեկտեմբեր 10ին ինք Ֆրանսան իր ձեռք անցուցած ժամանակն ինչ սահմանագծութիւններ ունէր այն և 1870 սեպտեմբեր 2ին ինչ վիճակի մէջ թողուց զայն։

Ա. Մէզիէր

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՕՍՄԱՆԱՍՏԱՆ

Կ. պոլսէն Թանի թղթակիցը հեռագրած է հետևեալը. «Թիւրք լրագիրների և հեռագրական մի քանի գործակալութիւնների իմացուցածին հակառակ, երկրորդ անգամ լինելով կը հաստատեմ թէ սահմանագծութեան յանձնաժողովի անդամները դրեթէ միաձայնութեամբ մերժած են Թիւրքին թողուլ յունական Նէղէրոս գիւղը և անոր վերաբերող հողերը։ Խնդիրն այս կերպով կրնայ որոշուած համարուիլ։

«Բ. Դրան և օսմանեան պանքային միջև բանակցութիւնները դժուարութիւնների հանդիպած են։ Պանքան կառաջարկէ 60,000 ոսկի տալ իբրև առաջին վճարք, իսկ Դուռը կուզէ 200,000։ Յետոյ լինելիք վճարքները (մինչև 800,000 օսմ. ոսկի) 2 ամիս միջոց պիտի ունենան։ Այս ծրագիրը պետութիւններին հաղորդող թղթին մէջ գրուած է թէ այդ փոխառութիւն պիտի գործածուի թիւրք զօրքերին Թեսալիայէն ելնելը փութացունելու։»

— Կը հաւատան թէ յոյն կառավարութիւնը պետութիւնների միջնորդութեանը դիմած է, խաղաղութեան վերջնական դաշնագրի ստորագրուելուն դէմ ելած երկու դժուարութիւնները կարգադրելու համար։ Յայտնի է մեր ընթերցողների որ այդ երկու դլխաւոր դժուարութիւններն են հիւպատոսական պայմանագրութիւնները և պատերազմէն վնասուած անհատներին վճարուելիք տուգանքին քանակութիւնը։

— Վիէննայի մէջ բաւական մեծ նշանակութիւն կուտան աւստրիական շոգենաւային Լոյտ ընկերութեան Մէրսինա նաւահանգստի գործակալի բանտարկուելուն պատճառով Բ. Դրան և Կ. պոլսի աւստրիական դեսպանատան միջև ծագած վէճին։ Այդ միջադէպ՝ որի մասին գրուած էր Արմէնիայի նախորդ թիւին մէջ, պարտաւորցուցեր է աւստրիական կառավարութիւնը «Լէոյրար» յածաւորակը ղրկել Կիլիկիայի նաւահանգիստներէ մին եկող Մէրսին քաղաքին առջև, քրիստոնեայ ժողովուրդը պաշտպանելու, բանտարկուած գործակալին արձակուիլը ապահովցունելու և անոր խոստացուած փոխարինութիւնները գործադրել տալու համար։ Աւստրիական դեսպանն այդ գործի նկատմամբ մի խիստ ազդու ծանուցագիր ղրկած է Բ. Դրան։

— Կ. պոլսէն կը հեռագրեն թէ աւստրիական դեսպանը կը պահանջէ որ Մէրսինայի շոգենաւային գործակալին եղած նախատինքին փոխարէն պաշտօնանկ լինին Ատանայի նահանգապետը և Մէրսինի գաւառապետը։

— Վիէննայի լրագիրներին մէջ հրատարակուած կայ թէ Թեսալիայի սահմանագլխին վրայ, Տիսքաթայի և Տօմէնիքի մէջտեղը, հելլեն աւազակներու մի խումբ յարձակեր է եղեր թիւրք ոստիկանութիւնն անոնցմէ բաւական թուով սպաններ և մնացածներն ալ յետ քշեր է եղեր, 150ի չափ հրացան գրաւելէ յետոյ։

— Կ. պոլսէն նոյ. 13ին հեռագրուած է անգլիական լրագիրներին. «Կըսուի թէ ռուսական դեսպանատունը դիտ-

զութիւն արեր է եղեր Բ. Դրան որ եթէ Թիւրք կառավարութիւնը Յոյների տուած պատերազմական տուգանքի մէկ մասը ուզէ յատկացունել նոր սպառազինութիւնների, ռուս կառավարութիւնն ալ պիտի յիշեցունէ իրեն թէ ռուսական պատերազմական տուգանքէն առհաշիւ իր վճարելիք պարտքեր դեռ չեն վճարուած։

— Անգլիական լրագիրները կը գրեն թէ Աւստրահունգարիայի արտաքին գործերի նախարար Կոլուխովսքի կոմսն առաջարկեր է պետութիւններին որ Կրէտէի խնդրին կարգադրութիւնը յանձնուի Կ. պոլսի դեսպաններին։

— Բ. Դուռը Շէֆիէր գնդապետին կը բէտէի առժամանակեայ կառավարիչ նշանակուելուն դէմ իր ընդդիմութիւն կը շարունակէ։ Պետութիւններին մի նոր շրջաբերական ալ ղրկեր է որի մէջ կը թուէ իր առարկութիւններ Շէֆիէր գնդապետի ընտրութեանը դէմ։

— Եւրոպացի ծովակալները գրեր են Կրէտական ժողովի նախագահին թէ ստացած են ժողովին ղրկած ծանուցագիրը որով կը յայտարարէր թէ կընդունին Կրէտէի ինքնավարութիւնը և թիւրք զօրքերին կղզիէն ելնելը կը խնդրեն։ Ծովակալները իրենց գրութեան մէջ ըսեր են միանդամայն թէ նկատողութեան առած են ծանուցագիրը, բայց վերջնական պատասխան մը չեն կրնար տալ, նոր կառավարչին Կրէտէ հասնելէն առաջ, որին պիտի յանձնուի ծանուցագիրը։

— Կ. պոլսեն նոյ. 13ին հեռագրած է Հաւասի գործակալութիւնը.

Խաղաղութեան վերջնական դաշնագրին համար 17րդ նիսան եղաւ այսօր։ Յոյն պատուիրակներն Աթէնքէն հրահանգի կը սպասեն հետեւեալ կէտերին համար.

Թիւրքերը կառաջարկեն որ վերջնական դաշնագրին քարիթիւլասիոնների վերաբերեալ 9րդ յօդուածը մնայ ապագային մէջ հիւպատոսական պայմաններին վրայ վիճաբանուելու ժամանակին որ խաղաղութեան ստորագրուելէն յետոյ պիտի կարգադրուի։ Այդ պարագայի մէջ, նախնական դաշնագրի 3րդ յօդուածի տրամադրութեան վրայ աւելի յետոյ կը վիճաբանուի։

Իսկ Յոյները կառարկեն որ այն 3րդ յօդուած Բ. Դրան իրաւագէտ խորհրդականների խմբագրած մէկ ծրագիրն է միայն և կուզեն կառավարութեան պատրաստած վերջնական մէկ ծրագիրն ունենալ։

Եթէ բանակցութիւնները քիչ ժամանակէն եղրակացութեան մը չյանգին, տէրութիւնների իրաւարարութեան դիմում պիտի լինի։

ՆԱՄԱԿ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՆԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Ուսթը, 2 Նոյեմբեր 97

Դրիչս առաջ չերթար այստեղի ազգային վիճակին վրայ ձեզ գրելու։ Երանի՛ ձեզ որ այս ամեն խառնակութիւնները, տխրեցուցիչ երևոյթները տեսնելով և իմանալով մէկտեղ, չէք վհատիր այսչափ տարիներէ ի վեր և տակաւին գրիչ կը շարժէք։

Կար ժամանակ որ այստեղի Հայ ժողովուրդը լուցկիի պէս դիւրավառ եղած էր. ամեն մէկ խօսք, տեղի կամ անտեղի, կոգեւորէր զինք։ Հիմա ալ միւս ծայրայեղութեան, թմրութեան և անտարբերութեան մէջ իյնալ սկսած է. ազգային զգացումը կը սկսի թուլնալ, իր ազգի վիճակի մասին հետաքրքրութիւնը պաղած է, ա՛լ չուզեր կարդալ կամ լսել ազգային կեանքը ներկայացունող տեղեկութիւններն ու խորհրդածութիւնները։

Շատ յաւալիէ թէ՝ ինչափ դաղթական Հայերը որ Հայաստանէն կուգան հոս, մանաւանդ Ուսթը, իրենց մէջէն այնպիսի նշանաւոր անձեր չեն արտադրած դեռ որոնք թէ՝ իրենց անձնական դիրք մը ստեղծելով և թէ՝ իրենց ազգին մեծ ծառայութիւն մը մատուցանելով նշանաւոր հանդիսանային։ Կարծես թէ բաւական չէ որ շատեր անյաջողութեան մատնուած անգործ կը թափառին, յաւալի վիճակ մ՚ալ սա է որ Հայեր հոս իրար ճնասելու ախտէն բռնուած են. յաճախ կը պատահի որ իրար դէմ դատեր կը բանան և իրենց արիւն քրքտինքով վաստկած ոտակներն ալ դատարանները կը թափեն, իրար յաղթելու և դատապարտել տալու եռանդով։ Դատարանները դալէր կը ցանեն, իսկ իրենց քսակները սենթ չէ մնացած։ Հիմա նոր դատարան մը շինուեցաւ հոս քարաշէն, կրանիթեայ քարերով։ Կը վախնամ որ մեր այդ եռանդոտ եղբայրներ իրենց ասպարէզ ընդարձակուած համարելով, ա՛լ աւելի խաղեր ելնեն խաղան իրար ճնասելու համար։ Եթէ իրենց այդ եռանդը իրար օգնելու և իրենց ազգի օգտին համար գործածեն, այդ միաբանասիրութենէ թէ՝ իրենք կը շահուին և թէ՝ իրենց համարիւն եղբայրները։

Ցիրաւի այս բոլոր չարիքի սկզբնապատճառը կերթայ կը յանգի սուլթան Համիտի բռնաւոր կառավարութեան որի երեսէն խեղճ Հայ ժողովուրդը ցիրուցան թափառական եղած և թշուառութեան հետեւանքն ելող այսպիսի հոգեմաշ վիճակի մը ենթարկուած է. բայց թափած կաթին վրայ լալը ի՞նչ օգուտ ունի. մենք պէտք է մեր ճարը նայինք և խելքերնիս գլուխնիս ժողվելով և իրար օգնելով այս օտար երկրի մէջ աշխատինք նիւթապէս, բարոյապէս և մտաւորապէս առաջ երթալու որ թէ՝ մենք մեղի կարենանք օգտակար լինել և թէ՝ հայրենիքը մնացած մեր ազգակիցներին։

Նոր հովիւ մը ունենանք և նոր հոգաբարձութիւն մը, անոնք ալ չկըրցան մէկտեղ ապրիլ։ Հիմա նոր ընտրութիւններ եղան. տեսնենք այսուհետև ի՞նչպէս պիտի երթայ։

Ֆ.

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրք կառավարութիւնը բաղմաթիւ փոքրիկ ամրոցներ շինել կուտայ սերպական սահմանագլխին վրայ։

— Կառավարութիւնը աւելցուցած է Թօքատի մէջ պահնորդ զօրքերը։

— Կ. պոլսի ալմանական նախորդ դեսպան պարոն Սաուրմա Եէլլ նոյ. 12ին մեկնեցաւ Կ. պոլսէն։ Թիւրք երևելիներէն իրեն համակրող պաշտօնական շատ մը մարդեր գնացած էին զինք ճանրայ դնելու։

— Պէյրութէն կը հեռագրեն նոյ. 12ին թէ օսմանեան պանքայի Պէյրութի մասնաճիւղի տնօրէնն ու տեսուչը փողոցին մէջ դաշոյնով պարնուեր են երեք տեղէ։ Իրենց վէրքեր ծանր չեն։ Այդ յարձակում անողները մահմէտականներ են և անձնական վրէժխնդրութեան արդիւնք կը համարուի։

— Վիէննայէն կը հեռագրեն նոյ. 13ին թէ Զէթինիէէն առնուած լուրերին նայելով, սահմանագլխի ալպանական ցեղերին մէջ երևցած գրգռութիւնը պակսելու տեղ, ա՛լ աւելի շատնալու վրայ է։ Ատոնք գրգռուած են մանաւանդ տեղական թիւրք իշխանութիւններին դէմ և չերեր թէ դրացի տէրութիւններին հետ կռուի բռնուիլ ուզեն։ Այսու ամենայնիւ, զգուշութեան համար, Մոնթէնէկրոյի կառավարութիւնը սահմանագլխին վրայ գտնուող պահականոցների զօրքերի թիւը պիտի աւելցունէ։

— Հաւասի գործակալութիւնը հեռագրած է Կ. պոլսէն թէ 19 զօրք և շատ մը սպայներ ձերբակալուելով բանտարկուած են, «Երիտասարդ Թիւրքիա» կուսակցութեան վերաբերելու և յայտարարութիւններ տարածած լինելու ամբաստանութեամբ։ Յեղափոխական գաղափարներն ահագին յառաջդիմութիւն ունեցած են զինուորական վարժարանին և ընդհանրապէս բոլոր վարժարաններին մէջ։

— Սուլթանը Մակեդոնիայի պուլկարական երեք առաջնորդութիւններին, Սթրումիցայի, Մէնթիքի և Գուքուշի համար պերաթները տուած էր. բայց իրատէ մ՚ելաւ թէ այդ պերաթներ յետ կառնէ առժամանակեայ կերպով։

— Լուր կայ թէ աւստրիական դեսպան Պարոն Բալիչէ կանչուած է Վիէննայէն և շուտով կը մեկնի Կ. պոլսէն։

— Վիէննայէն կը հեռագրեն նոյ. 16ին թէ Աւստրիա խիստ կերպով գոհացում կը պահանջէ Բ. Դուռէն և 48 ժամ մնացած է պայմանաժամը լրանալու։ Հակառակ պարագային մէջ, դեսպանը պիտի մեկնի Կ. պոլսէն և աւստրիական մարտանաւեր պիտի ռմբակոծեն Մէրսինը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Փարիզի 1900ի տիեզերական ցուցահանդէսին մասնակցելու համար ռուսական բաժնի կազմակերպող յանձնաժողովը՝ որին կը նախագահէ վաճառականական և գործարանական վարչութեան ինչպէս նաև գանձային նախարարութեան պաշտօնատան մը-նօրէն Տ. Բօվալէվսքի, որոշեր է 2 միլիոն ռուպլի յատկացունել այդ կազմակերպութեան։ Այդ գումարէ 150,000 ռուպլին պիտի յատկանայ կեդրոնական Ասիայի, Սիպերիայի և Կաւկասի համար մասնաւոր բաժին շինելու։

— Մատրիտի «Կազէթա» լրագիրը մէկ հրովարտակ հրատարակած է որով սպանիական կառավարութիւնը շատ ընդարձակ ներողութիւն կուտայ Բուպալի և Բօրթօ-Ռիքօի ապստամբներին որոնք գաղթած էին և այժմ բռնուած բանտարկուած կը մնան։

Ապստամբներէն անոնք որոնք բանտարկուած են, պիտի արձակուին և պիտի կրնան իրենց հայրենիք վերադառնալ. իսկ անոնք որ արտասահման ապաստանած են, պէտք է որ երթան նախ իրենց գտնուած տեղերի հիւպատոսներին ներկայանան և անոնցմէ անցագրուղթ ստանալէ յետոյ վերադառնան հայրենիք։

— Կը հաւատան թէ իտալական կառավարութիւնը Պրազիլիայի մէջ Իտալացիներին վրայ յաճախ եղած յարձակումներէն յուզուած, որոշեր է բանակցիլ Հարաւային Ամերիկայի գաղթականութեան մէջ ամենէն աւելի շահ-ունեցող տէրութիւններին հետ որպէսզի հաւաքաբար բողոքեն Պրազիլիայի Հանրապետութեան, այդ երկրի մէջ տիրող անապահովութեան դէմ։

— Պրազիլիայի մայրաքաղաք Ռիօ-դը-Եանէյրօէն կը հեռագրեն նոյ. 13ին թէ Ազգային ժողովը վերջնականապէս քուէարկեր է պաշարման վիճակ հրատարակել։ Այս որոշման հետեւանքով՝ Հանրապետութեան Նախագահին հակառակող կուսակցութեան անդամներէն երկու նշանաւոր երեսփոխաններ ձերբակալուեր են իբրև գրգռիչ։

— Պիսմարք իշխանի հիւանդութեան ծանրացած լինելու զրոյցները չեն հաստատուած։ Իրաւ է թէ իշխանը կը նեղուի յօդացաւէն, բայց վտանգաւոր վիճակի մը մէջ չէ։

— Լուր կը պտըտի թէ Հէսի իշխան Ֆրէտէրիք Շարլը քոյրը, Սիպիլա իշխանուհին, հաստատապէս որոշեր է ամուսնանալ ազնուական գերդաստանէ չեղող և հարստութիւն չունեցող մի սպայի հետ։ Շատ աշխատեր են համոզելու որ յետ կենայ այդ անհաւասար ամուսնութենէ, բայց իշխանուհին կը պնդէ իր մտադրութեան վրայ։

Այս լուր աւելի յուզում յառաջ բերած է նաև այն պատճառով որ Սիպիլա իշխանուհիի եղբայրը, Ֆրէտէրիք Շարլը իշխանը, Գերմանիայի Վիլհէլմ կայսրի քեռայրն է, անոր Մարգարիտա քոյրը առած է։

— Արդէն իմացուցած ենք որ Ծայրագոյն Արեւելքի ալմանական նաւատորմիղը հրաման ստացած է Զանթուկ չինական նահանգի ծովեղերքն երթալու, ալմանացի միսիոնարներին Եէնչուի մէջ սպաննուելուն պատճառով։

Այդ միսիոնարներ գնացած հաս-

տատուած էին Զինաստանի ամենէն կրօնամոլ մէկ տեղը, նոյն իսկ Կոնֆիւկիոսի գերեզմանին մօտ, որպէսզի, կըսէին, կռապաշտութեան նոյն իսկ կեդրոնին մէջ կանգնեն խաչը։ Հոն տուներ գնած էին և մի քանի տարիէ վեր իրենց միսիոնարական պաշտօն կը վարէին, թէև ժողովրդի կողմէն իրենց դէմ ատելութիւն կը տեսնէին։ Ամենայն Սրբոց տօնի օրը (նոյ. 1) երբ ամենքը մէկտեղ հաւաքուած էին տօնախմբութեան համար, ամբոխը յարձակեցաւ իրենց վրայ և երկուքը սպաննեց։

Զինական տեղային իշխանութիւնները բան մը չըրին արիւնհեղութեան առջևն առնելու համար։ Ալմանական կառավարութիւնը Ռէգինի կառավարութեան դիմելով իսկոյն հատուցում պահանջեց. բայց որովհետև յայտնի է թէ չինական պաշտօնը այսպիսի խընդիրների մէջ շատ կամաց կամաց կը շարժի, Ալմանիա ուղեց ուղղակի ինք և ազգու կերպով գործել։ Ծովեզերքէն 350 հազարամէթր հեռու գտնուելով Եանչու, ալմանական ծովային զօրքերը չէին կրնար բան մ'ընել հոն. ուստի հրաման ստացած են Գիանչանկը դրաւելու որ շատ ապահով մի նաւահանգիստ է. ադկէ դուրս չպիտի ելնեն մինչև որ արդար հատուցում լինի։

— Պուքրէշի դիւանագիտական ակումբներին մէջ լուր կը պտըտի թէ Ռումանիայի Կարոլ թագաւորը մտադիր է Օտերս Բէթէսպուրկ երթալ Զարին այցելութիւն մը տալու։ Հաւանական է որ Կ. պոլիս ալ երթայ Սուլթանին այցելութեան։

— Սերպիայի նախարարապետ Տ. Վլատան Եորկէվիչ որ 1895էն սկսած մինչև վերջերս դեսպանութեան պաշտօն կը վարէր Կ. պոլսի մէջ, նոյ.14ին Կ. պոլիս գնացեր է, իր պաշտօնաթողութեան դիրերը սո լ'Ժանին ներկայացունելու համար։ Բայց շուտով Պէլկրատ պիտի վերադառնայ որ մեծ մասը արմատականներէ բաղկացած այժմեան Սքուբչինան լուծելով անմիջապէս նոր ընտրութիւնների ձեռնարկէ, իրենք իրենց չէղոք անուանողների ծրագրին համեմատ, և նոր Սքուբչինան ժողովի հրաւիրէ այս տարիի վերջանալէն առաջ։

Նախորդ նախարարապետ Տ. Նովաքովիչ որ նոյնպէս Կ.պոլսի դեսպան եղած է 1886էն մինչև 1891 և որ այժմ ռուսասիրական ձգտում ունեցող յառաջդիմականների պարագլուխը է, հաւանօրէն Տ. Վլատան Եորկէվիչի տեղ Կ. պոլիս կը ղրկուի դեսպանութեան պաշտօնով։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Արմենիայի խմբագրատունը քիչ օրէն ուրիշ փողոց փոխադրուելուն պատճառով, հետևեալ գիրքերին համար, որոնք մեծ քանակութեամբ կը գտնուին խմբագրատան մէջ, թեթևցունելու նպատակով որոշեցինք իրենց բուն գնի կէսովը ծախել անոնց որոնք կը փութան գնել մինչև Նոյեմբեր ամսի վերջը (Ն. Տ.)։ Նոյեմբեր 30էն յետոյ մեզ հասած ոևէ պատուէր՝ ժամանակը անցած լինելով և մեր նը. պատակի չհամապատասխանելով, չը կրնար օգտուիլ յիշեալ գիրքերի գիներին վրայ եղած տարապայման և առժամանակեայ զեղչէն. ուստի պէտք է փութալ։ Աւելորդ է ըսել որ ստակը կանխիկ չղրկուած՝ գիրք չղրկուիր։

Ահաւասիկ այդ գիրքերը որոնց առջև նշանակուած են իրենց բուն գիները։ Այս միամսեայ ժամանակամիջոցի մէջ գնողները՝ այս գիներիկէսը միայն հաշուելով պիտի վճարեն.

	Ֆր.	ան.
1. Հայաստանի թշուառները	1	20
2. Թիւրքիոյ Հայերն և իրենց դրացիները. Գրեց Մ.Ա.		50
3. Արմենիայի յուշարար. Ա. տարեկան (1885-86)	1	40
4. Վրէժ		20
5. Թովմաս Բոցարիս		20
6. Նժոյշներ Մ. Փորթուգալեանի գրած ոտանաւորներէն		15
7. Մի պուկար հայրենասէր. Զաքարիա Սթոյանոֆ	1	40
8. Իմ հայրասպան ընկերը	1	
9. Արտօսր Հայաստանի, Տեղեկագիր Բալուայ, Խարբերդի կայն		2
10. Պատկեր Շարժումն Հայաստանի		1

Վերոգրեալներէն զատ ծախու կը գտնուին Արմենիայի խմբագրատան բէջ և հետևեալ գիրքերը. բայց ասոնք նոյն իսկ հիմա ալ կը ծախուին իրենց առջև նշանակուած գիներով միայն. ասոնց գնին վրայ զեղչ չենք աներ միւսներին պէս։

	Ֆր.	ան.
1. Լկինեան. Կսկծանք		30
2. Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ		70
3. Դայլայլիկ. Գրեաց Բ. Ց. Վարդուկեանց. Դրուագ Ա.		75
4. Պ. Թորոսեան. Պիտանի գիտելիքներ. Ամերիկա գտնուող կամ հոն գնացող Հայերին համար	1	25
5. Երզնկեանց. Դասագիրք հայկական ձայնագր.	2	10
6. Պրիւբը, Բանալիք բնական երևութից		4.

LANGLOIS (Victor). — *Collection des historiens anciens et modernes de l'Arménie*, publiée en français, sous les auspices de S. E. Nubar Pacha, et avec le concours des principaux arménistes français et étrangers. (Cette collection devait comprendre tous les historiens arméniens depuis l'antiquité jusqu'à la fin du XVIIIme siècle et devait former 5 gros volumes divisés par époque; mais la mort prématurée de V. Langlois l'empêcha d'arriver jusqu'à la fin de son but et il n'a pu faire paraître que les 2 volumes suivants :)

TOME I. 1re PÉRIODE. — Historiens grecs et syriens traduits auciennement en arménien. (MAR APAS CATINA, Histoire ancienne de l'Arménie. BARDESANE, Œuvres historiques et philosophiques. AGATHANGE, Histoire du règne de Tiridate et de la Prédication de S. Grégoire l'Illuminateur, traduction française accompagnée de la version grecque et latine. FAUSTUS DE BYSANCE, Bibliothèque historique. LÉROUBNA D'EDESSE, Histoire d'Abgar et de la Prédication de Thaddée. ZÉNOPE DE GLAG et son continuateur JEAN MAMIGONIAN, Histoire de Daron. FRAGMENTS D'HISTORIENS GRECS PERDUS conservés dans les œuvres des écrivains arméniens).

TOME 11. 1re PÉRIODE. — Historiens arméniens du Ve siècle (GORIUN, Biographie de Mesrob. UN AUTEUR ANONYME DU Ve SIÈCLE, Généalogie de la famille de S. Nersès. MOÏSE DE KHORÈNE, Histoire d'Arménie. ELISÉE VARTABED, Histoire de Vartan et de la guerre des Arméniens- LAZARE DE PHARBE, Histoire d'Arménie. EZNIG DE GOGHP, Extrait de la Réfutation des Sectes).

Toutes ces traductions sont accompagnées de notes historiques, critiques et philologiques.

Les 2 volumes..... 32 fr.
Chaque volume séparément.. 16 fr. 50

ALISHAN P. L. — *Physiographie de l'Arménie*. 2e édition..... 0 fr. 80

B. ROSENBOURG. — De la possibilité du *désarmement général*. Solution de la question de l'Alsace-Lorraine, etc, par le *partage de la Turquie*..... 0 fr. 80

M. J. ZORAB. — *Haïc et Belus*, A National Drama..... 1 fr. 50

P. VARTOOGUIAN. — *Armenia's Ordeal*. Second edition..... 5 fr.

Dr. ARSAK TER MICKELIAN. — Die *Armenische Kirche* in ihren Beziehungen zur byzantinischen (vom IV, bis zum XII, jahrhundert)..... 3 fr.

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչև 2 քիլօ) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

ԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Ոմանք իրենց հեղինակած կամ հրատարակած գիրքերէն կը ղրկեն մեզ, Արմենիայի խմբագրատան մէջ ծախուելու համար։ Որպէս զի թէ՛ իրենք աւելորդ նեղութիւն կրած չլինին ղրկելու համար և թէ՛ մենք ալ ոեւէ պատասխան մը իրենց գրելու համար, այդպիսի փափաք ունեցողների ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ տողերին վրայ։

Նոր գիրք մը հրատարակողը նախ 2 օրինակ անկէ պէտք է ղրկէ մեզ, անոր հրատարակութիւնը լրագրական սովորութեան համեմատ ծանուցուելու համար Արմենիայի մէջ «Նոր հրատարակութիւններ» վերնագրին տակ։ Իսկ եթէ կուզէ նաեւ որ նոյն գրքէն ծախու գտնուի Արմենիայի խմբագրատան մէջ, պէտք է որ մասնաւոր նամակով մը իմացունէ մեզ իր պայմանները և մեր հաճութիւն ստանալէ յետոյ ղրկէ մեզ մօտ ծախուելու համար։ Կը խնդրենք որ ոչ ոք չկանխէ մեզ այդպիսի գրավաճառական յանձնարարութիւն անել, առանց մեր հաւանութիւն ստացած լինելու։ Հակառակ պարագայի մէջ, իրենց ղրկածի համար ոեւէ պատասխան տալու պարտաւոր չենք համարեր մեզ։

Մեզ յայտնուելիք պայմաններն են.

1. Գրքին գինը քանի՞ է Մարսէյլի մէջ ծախելու համար։ Եւ որովհետև ընդհանրապէս Մարսէյլէն դուրս զանազան տեղերէ գնել կուզուին այդ գիրքեր, հարկ կը լինի Մարսէյլի համար նշանակուած գնին վրայ աւելցունել նաեւ փոստի ծախքը։

2. Ի՞նչ զեղչ կը լինի խմբագրութեանս համար եթէ կանխավճարով ուղենք գնել. և ի՞նչ զեղչ կը լինի եթէ յանձնարարութեամբ միայն ընդունիլ ուզենք (այսինքն ծախուածին միայն ստակը տալու, իսկ չծախուածը իր տիրոջ վերադարձնելու պայմանով, փոստի ծախքերը տիրոջ հաշուին անցնելով)։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջևը նշանակուած գիներին մէջ հաշուուած է նաև ղրկելու փոստի ծախքը։

ԼԿԻՆԵԱՆ. Կսկծանք (Բանաստեղծական գրուած մը Հայաստանի վիճակին վրայ). 1890. Տպագր. հեղինակին. Նիւ Եորք։ 30 սանթիմ

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱՑ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱԶԼԱՅԱՐԻՍ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՜փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

—Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկի դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունել իրենց ծանուցումներ, ըստ լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիայի ճակատը, տառէն վրայ հաշուելով. 1 երկաթագրի (դլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ գրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Պ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Պ. Փորթուգալեանի
Le Gérant : François CARRIERE
Marseille. — Imprimerie et Papeterie du M d
Allées de Meilhan, 44.